ՀՏԴ 32(479.25)

Ա.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության ուսումնասիրությունը մեծ երջանկություն է ամեն մի հայախոսի համար: Հրապուրում, գրավում, իր ետևից ոչ միայն տիրաբար տանում են հեղինակի գաղափարները, մտքի թռիչքը, դատողությունների տրամաբանական հիմնավորումն ու հետևողականությունը, այլև կախարդում է Նժդեհի լեզուն: Փորձ է արվում՝ ներկայացնելու Նժդեհի մտածողության ընթացքը, խոսքի ուժը, տրամաբանության հզորությունը:

Առանցքային բառեր. լեզվազգացողություն, լեզվամտածողություն, բառագործություն, լեզվաշխարհ:

Գարեգին Նժդեհը քսաներորդ դարի հայ իմաստասիրական մտքի ներկայացուցիչներից է: Սակայն նա առավելապես հայտնի է որպես ռազմական և քաղաքական գործիչ: Անցյալ դարի 90-ական թվականներին և, հատկապես, մերօրյա հայաստանյան իրականության մեջ Նժդեհի գրչին պատկանող բազմաթիվ ստեղծագործությունների հրատարակումը հնարավորություն ընձեռեց նոր էջ բացելու, նժդեհագիտության ոլորտում կարևոր և արդիական վերլուծություններն իրականացնելու համար: Գիտական հետաքրքրութունների առարկա է դառնում Նժդեհի խոր, բազմաբովանդակ ու հարուստ ստեղծագործական ժառանգությունը, որի ճանաչողական նշանակությունը չի սահմանափակվում միայն պատմագիտական բնույթի գործերով: Դա պայմանավորված է նրանով, որ նրա ստեղծագործական ժառանգության մեջ զգալի տեղ են զբաղեցնում այնպիսի աշխատություններ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել Նժդեհին նաև ոչ միայն որպես ռազմական կամ քաղաքական գործիչ: Այդ աշխատանքներով ճանաչում ենք, առաջին հերթին, Նժդեհ-փիլիսոփային, Նժդեհ-մտածողին, աֆորիզմների անզուգական հեղինակին: Նժդեհի աշխատությունների ուսումնասիրությունը, որպես արդյունք՝ դրանց բնորոշ գծերի վերհանումն ու բացահայտումը կարևոր են ոչ միայն նժդեհագիտության զարգացման, այլև Նժդեհ-լեզվագետին, Նժդեհ-ճարտասանին ներկայացնելու տեսանկյունից:

Գարեգին Նժդեհը հայ մեծագույն ճարտասաններից է՝ Պարույր Հայկազնի, Դավիթ Անհաղթի և մյուս երևելիների դասից: Նրա խոսքի վարպետությունը կարիք ունի հանգամանալից և խոր ուսումնասիրության: Անվիճելի է նրա դերը թե՛ հնչող խոսքին կատարելապես տիրապետելու առումով, թե՛ հռետորական արվեստի տեսական ու գործնական մի շարք հարցերի վերաբերյալ իր հիմնավոր դատողություններով:

Կախարդական է Նժդեհյան լեզվաշխարհը: Այդպես կարող է գրել նա, ով փայլուն տիրապետում է հայերենին, պաշտում է մայրենի լեզուն, ապրում է դրանով՝ ապրեցնելով նաև ընթերցողին: Վկան՝ «Ինքնակենսագրությունում» նրա անդրադարձը. Հայաստանից հեռանալիս վերցրած մասունքների մեջ եղել է նաև Հայկազյան բառարանը՝ «Իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ» [1]:

Նժդեհյան իմաստասիրության, գաղափարախոսության հենքը հայերենն է: Նժդեհի մտածողության և ստեղծագործական ներուժի հիմքը հայերենն է: Առանց երկմտելու կարելի է ասել՝ մեկ այլ լեզվով չէր կարող արարվել ցեղակրոնություն ուսմունքը: Հարուստ հայերեն, ապշեցնող լեզվազգացողություն, ուսանելի բառագործածություն: Ցեղակրոնություն ուսմունքը մշակելիս նա «ցեղ» արմատով բազում նոր բառեր ու բառակապակցություններ է ստեղծել՝ «ցեղաճանաչում», «ցեղադրոշ», «ցեղադրոշմ», «ցեղագիտակցում», «ցեղապրում», «ցեղամարդ», «ցեղային անմահություն», «ցեղային արթնություն», «ցեղի կամք» և այլն…

Բառընտրությունը, բառաստեղծությունը, բառագործածութունր երբեք ինքնանպատակ չէին նրա համար: «Ճիշտ բառը ճիշտ տեղում» սկզբունքը Նժդեհի բնական և անգամ բնազդական գործելակերպն է:

«Միթե՞ պարտվողական հոգեբանությունը չի ծնում լեզվական օտարամոլություն զազրելի եզրույթը: Շիտակ ազգայնականը չի կարող հանդուրժել հայ մարդու օտարախոսությունը», - փաստում է մեծ մտածողը: Մի առիթով Նժդեհը գրում է, որ կա՞ արդյոք ավելի ծիծաղելի մի բան, քան երբ հայ մտավորականը հայությունից է խոսում, ազգասիրություն է քարոզում, ուրիշներին խրատում, սակայն… ոչ հայերենով: «Կգարշիմ այն բոլորի հայրենասիրությունից, ծույլ հայրենասիրությունից, որոնք դեռ թուրքերեն կխոսեն,,, Ողորմելի, փափկամարմին, ծույլ հայրենասիրություն, որ իր մայրենի լեզուն յուրացնելու ճիգն իսկ չի փորձում» [2]:

Մարդկային լեզուն առհասարակ, իսկ հայոց ոսկեղենիկը հատկապես, հայերենի ամեն մի բառը Նժդեհի համար մշակութային անսպառելի հարստություն և վիթխարի ուժականության կրողն է: Հայերենի գերազանց իմացությունն ու հայրենասիրությունն է նրա խոսքին անդիմադրելի ուժ և համոզմունք հաղորդում: Նրա ասելիքը զանգվածներին ոգևորելու, հավատ ներշնչելու, զինվորներին անպարտելի դարձնելու կախարդական մի փայտիկ է կարծես: Նրա խոսքը դառնում է ոգի, որն էլ հռետորի գլխավոր արժանիքն է: Հզոր ձայն է ունեցել Նժդեհը՝ զորականի, առաջնորդի հզոր ձայն: Տեսաբանները մեծ հռետորի զորեղ զենքն են համարել ձայնը: Նա բացառիկ ուշադրություն է հատկացրել սեփական ձայնը մշակելուն: Ով գեթ մեկ անգամ լսել է նրան, տպավորվել է հատկապես հաղթ, գրավիչ, հուժկու, ռազմահունչ, ինքնավստահ, վճռական ձայնով:

Ղարաքիլիսայի ճակատամարտից առաջ նրա արտասանած, հիրավի, բախտորոշ ճառի մասին ներկաներից մեկի պատմածը լավագույն հիմնավորումն է վերն ասվածի. «Ծովածավալ բազմությունը, որ հուսալքված, ընկճված, հոգեկան ծանր տագնապի էր մատնված, միանգամից փոխվեց՝ հմայված ու հիպնոսացած Նժդեհի հրաշունչ խոսքերից: Պետք էր տեսնել, թե նրա ճառից հետո ինչպես լքված, ընկճված ժողովուրդը գոտեպնդվեց ու ամբոխային վիճակից դուրս գալով՝ համախմբվեց զինվորականների շուրջը: Կարգապահությամբ ենթարկվեց հրահանգներին՝ կազմելով վաշտեր և գումարտակներ» [3]:

Արդիական է Նժդեհի ձևակերպումը ղեկավարի, առաջնորդի կառավարման մասին. «Կառավարելու մի հատուկ միջոց ունի նա՝ խոսքը խիստ, բայց ընկերական, խոսքը երբեմն որպես սանձ և միշտ էլ որպես խթան» [4]:

Մարդկային խոսքի զորության գիտակցմանը նա հավելում է նաև լեզվագործածության նկատմամբ մեծ պատասխանատվության հրամայականը. «Սնամեջ խոսքը վտանգավոր է անքննադատ ընթերցողի համար» [1]:

Նժդեհը պահանջում է խուսափել ինչպես բառերի անմիտ, այնպես էլ դրանց անպարկեշտ գործածությունից: Հատկապես մտավորականը պետք է զերծ մնա այն խոսքից, որն իրողության արտահայտությունը չէ, այլ սխալ, անորոշ, կեղծ մտքի արգասիք, մտավոր քաոսի դրսևորում: Այդօրինակ խոսքը նա անվանում է «անբարոյացուցիչ» և համարում է հայ ժողովրդի անմիաբանության հիմնական պատճառներից մեկը:

Ականջալուր պետք է լինել այն մարդուն, ով գիտի ամեն բառի արժեքը: Պետք է համաձայնենք նրա գնահատականի հետ՝ դառը, սակայն, միանգամայն արդարացի: «Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար կլինեին հայ ժողովրդին, եթե բնավ լույս չտեսնեին: Թերթեր ունենք, որոնց, ինչպես եղինջին, չի կարելի ձեռք տալ առանց խայթվելու: Մաղձ, հիմարական ծաղր, շուկային հիշեցնող քաշքշուկ, սևացում, զազրախոսություն՝ ահա մեր «խայթող» թերթերի հրապարակախոսությունը… Այդ թերթերի բովանդակության չափ և ավելի զարհուրելի է և իրենց բազարի լեզուն: Սրանց համար գոյություն չունի հրապարակախոսական էթիկա» [4]:

Եթե լրագրողը ցանկանում է որևէ մեկին քննադատել, ապա հրապարակախոսական բանավեճի լավագույն օրինակը նրա համար դարձյալ Նժդեհի խոսքարվեստն է: Նժդեհի գործածած ամենասուր ձևակերպումն անգամ չի ընկալվում իբրև հայհոյանք, քանի որ պահպանում է ոճի և իմաստի ներդաշնակությունը:

Ներկայացնելով Գարեգին Նժդեհին՝ անհնար է չանդրադառնալ նրա աֆորիզմներին (վճռակներին):

«Նրա մտքերը պայթուցիկներ են, որոնք ձգտում են սրտերը հրդեհել՝ երկարաշունչ չեն նրանք, որովհետև շրթունքի խոսք լինելուց առաջ սրտի պոռթկումներ են» [5]: Այսպես է Հայկ Ասատրյանը բնութագրում Նժդեհյան լեզվամտածողությունը: Մի առիթով հենց ինքն է նկատել, որ չի սիրում երկարաբանել: «Ընթերցո՛ղ, թույլ տուր մտքերս աֆորիզմներով արտահայտեմ» [2]: Ահա այդ ոճը՝ աֆորիզմների ձևով դատողությունների ամփոփումը, Նժդեհյան դասական շարադրանքի բնորոշ գծերից է: Ասելիքը՝ ավարտուն մի միտք, այնպես սեղմ ու ընդգրկուն, նրբագեղ ու անսպասելի է մատուցվում, որ առավելագույն ազդեցություն է գործում ոչ միայն իր բովանդակությամբ, այլև ձևով: Հայրենի լիակատար իմացությունն է հենց գումարվել Նժդեհյան հզոր մտքին՝ դարձնելով նրան անզուգական հեղինակ փիլիսոփայական դժվարագույն այդ ժանրի: Աֆորիզմներում շաղկապվում է իմաստասիրական ու լեզվական խոսքի զորությունը՝ ամփոփելով Նժդեհյան իմաստասիրության գլխավոր բանալին՝ ինքնաճանաչումը: Բերենք աֆորիզմի օրինակներ [2, 4, 6].

- Իրենց տականքները՝ ահա ազգերի իրական թշնամին:
- Ես տեսա հոգով ազատը ստրկության մեջ, և սիրեցի մարդը: Ես տեսա ստրուկն ազատության մեջ և գարշեցի մարդուց:
- Իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու:
- Քաղաքականության մեջ պարտվում, ձախողում են այն ժողովուրդները, որոնք չունեն հստակ նպատակ, կամ երբ ունեցածը խստորեն ազգային չէ:
- Մեր գործերում կա այնքան բարություն միայն, որքան ճշմարտություն կա մեր խոսքերի մեջ:
- Աշխատիր, որ խոսքդ լինի համակ լույս և ճշմարտության կայծակ, որ զարկելուց առաջ լուսավորում է առարկաները:

Աֆորիզմները խոսքի վիթխարի ուժով են օժտված, ուստի, անհրաժեշտ է, որ ավելի գործուն և արդյունավետ կիրառություն գտնեն հանրային և անձնային կյանքի կազմակերպման ու կառավարման մեջ:

Գ. Նժդեհը գտնում էր, որ հնչող խոսքը հակադարձ ազդեցություն ունի մեզանից յուրաքանչյուրի վրա: Ըստ նրա՝ մեր արտաբերած ամեն մի խոսք, արտահայտություն ուրիշներից ավելի շատ մեզ վրա է ազդում: Նժդեհը հնչող խոսքին տալիս է ճանաչողական արժեք. «Մի ընտանիք, մի հասարակություն, մի ժողովուրդ ճանաչելու համար պետք է լսել նրա մեջ հնչող խոսքը» [2]:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել.

1. Կարելի է Նժդեհից ոչ միայն հայերեն սովորել, այլև հայերենով ստեղծագործել սովորել: Նրա թողած ժառանգությամբ կարելի է ազատվել լեզվական օտարամոլությունից ու ազգային ինքնանվաստացումից:

2. Նժդեհյան լեզվաշխարհը հայրենախոսության հավերժության ճանապարհ է:

3. Լեզվաոճական և լեզվատրամաբանական նժդեհյան ժառանգությունը տակավին կարոտ է համակողմանի և խոր ուսումնասիրության:

4. Կարելի է նկատել, որ ուղղակիորեն ինքներս մեզ ենք կողոպտում, երբ մեր ազգային-պետական, քաղաքական-հասարակական ու անձնական կյանքի կազմակերպման մեջ գրեթե չենք օգտվում Նժդեհ-իմաստասերի, Նժդեհ-լեզվագետի, Նժդեհ-ճարտասանի տեսական ու գործնական ժառանգությունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գ. Նժդեհ**. Հատընտիր, Ե. 2001, էջ 304, 344:
2. **Գ. Նժդեհ**. Որդիների պայքարը հայրերի դեմ. Սելանիկ, 1927, էջ 75:
3. **Ավ. Նժդեհ**, Պեյրութ, «Համազգային», 1968, էջ 67:
4. **Գ. Նժդեհ**. Էջեր իմ օրագրէն, Կահիրե, 1924, էջ 56:
5. **Հ. Ասատրյան**. Մի փոքրիկ մեկնաբանություն, Սոֆիա, 1932, էջ 7:
6. **Գ. Նժդեհ**, Իմ պատասխանը, Սոֆիա, 1937, էջ 20:

А.В. БАГДАСАРЯН

СИЛА СЛОВА ГАРЕГИНА НЖДЕ

Исследование теоретического наследия Г. Нжде является большим счастьем для каждого армяноязычного человека. Завораживают не только идеи, творческое мышление и логические обоснования рассуждений автора, но и его язык. В статье делается попытка описать мировоззрение Нжде, показать силу его языка и мышления.

Ключевые слова: лингвистическое восприятие, лингвистическое мышление, употребление слова, лингвистический мир.

A.V. BAGHDASARYAN

WORD POWER OF GAREGIN NZHDEH

Studying G. Nzhdeh’s theoretical heritage is a great happiness for every Armenian speaker. Not only does it seduce, captivate, pursue the author’s ideas, the filght of thought, the logical substantiation and consistency of judgments, but Nzhdeh’s language enchants, too.

This article tries to describe Nzhdeh’s thinking, the power of his words, the power of his thoughts.

Keywords: linguistics, linguistic thinking, word usage, linguistic area.